3 դեկտեմբերի 2009 թվականի N 1389- Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 14-Ի N 1190-Ն ԵՎ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-Ի N 252-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ

Մ Ա Ս Ի Ն

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 14-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կազմակերպա-կան-իրավական ձևեր չունեցող, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով պետական գրանցում չունեցող պետական մասնակցությամբ իրավաբանական անձանց լուծարման գործընթացը կանոնակարգելու մասին» N 1190-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 16-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«16. Հանձնաժողովն իրավաբանական անձի գույքի գնահատում իրականացնելու նպատակով դիմում է գնահատող կազմակերպությանը (անկախ գնահատողին), ընդ որում, գույքի արժեքի հաշվարկման ծախսերը վճարվում են իրավաբանական անձի միջոցների հաշվին»:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի փետրվարի 12-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կազմակեր-պական-իրավական ձևեր չունեցող և չլուծարված իրավաբանական անձանց հետագա կարգավիճակի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 14-ի N 1190-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» N 252-Ն որոշման 1-ին կետով հաստատված ցանկում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) ցանկը լրացնել նոր՝ 16.1-ին, 61.1-ին և 103.1-ին տողերով.

« 16.1.	«ՀԱՅԱՐԴՇԻՆԱՆՅՈՒԹԵՐ» ՊԵՏԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՀՐԱՁԴԱՆԻ ՑԵՄԵՆՏԻ	Ք.ՀՐԱՁԴԱՆ, ՑԵՄԵՆՏԻ

	ԳՈՐԾԱՐԱՆ» ՊՁ	ԳՈՐԾԱՐԱՆ

61.1.	ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԻՆՈՏԵՍԱՎԱՐՁՈՒՅԹ» ՊՁ	Ք.ԵՐԵՎԱՆ, ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ 22

103.1.	«ԲՆԱԿԿՈՄՈՒՆՏՆՏ» Հ/Մ ԱՐՄԱՎԻՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՊՁ	ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ, Գ.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

».

2) ցանկի 1-ին տողում «ԱՐԴՏՐԱՆՋԻՏ ՊՁ» բառերը փոխարինել «ՀՀ ԱՐԴՅՈՒՆԱԲԵ-ՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԱՐԴՏՐԱՆՋԻՏ» ԿՈՄԵՐՑԻՈՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՁ» բառերով.

3) ցանկի 30-րդ տողում «ՋՐՇԻՆՊԱՍԱՐԿՈՒՄ ՊՁ» բառերը փոխարինել «ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԱՅՋՐՇԻՆ» ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՄԱՆ «ՋՐՇԻՆՊԱՍԱՐԿՈՒՄ» ՊՁ» բառերով.

4) ցանկի 54-րդ տողում «ՇԻՐԱԿ ՊՁ» բառերը փոխարինել «ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՀՐԱՏԱՐԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ԳՐԱԽԱՆՈՒԹՆԵՐԻ «ՇԻՐԱԿ» ՊՁ» բառերով.

5) ցանկի 104-րդ տողում «ԱՐՏԱՔԻՆ» բառը փոխարինել «ԱՐՏԱԿԱՐԳ» բառով.

6) ցանկում «ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» բառերը փոխարինել «ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» բառերով.

7) ցանկի 133-րդ տողում «ՇԱՏՎԱՆԻ ՍԵՐՄՆԱԲՈՒԾԱԿԱՆ» ՊՁ» բառերը փոխարինել «ՎԱՐԴԵՆԻՍԻ ՇՐՋԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԿՈՄԻ «ՇԱՏՎԱՆԻ ՍԵՐՄՆԱԲՈՒԾԱԿԱՆ» ՊՁ» բառերով.

8) ցանկի 148-րդ տողում «ՆՈՐԱՊԱՐ» բառը փոխարինել «ՆՈՐԱՊԱՏ» բառով։

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2009 թ. դեկտեմբերի

09_1389

Երևան